Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 1322-Ռ 12.05 2022 թ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ԹԻՎ 945-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետով և հիմք ընդունելով Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Ռ.Ռ.Սադոյանի 2022 թվականի մայիսի 11-ի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Ուժը կորցրած ճանաչել Համալսարանի ռեկտորի 2022 թվականի մարտի 17-ի «Համալսարանի ռեկտորի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 2616-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու և Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի նոր կազմը հաստատելու մասին» թիվ 945-Ա հրամանը:

2.Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհուրդը հաստատել հետևյալ կազմով.

1. Ռուզաննա Սադոյան – ֆակուլտետի դեկան (ֆակուլտետի խորհրդի նախագահ)
2. Նաիրա Սաֆարյան - ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր
3. Արմենուհի Փիլթակյան – ուսումնական գծով դեկանի տեղակալ
4. Ներսես Սամվելյան – գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ, ԱԴՄ ամբիոնի վարիչի պաշտոնակատար
5. Կամո Վարդանյան – գիտահետազոտական կենտրոնի ղեկավար
6. Սամվել Պիպոյան –կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոնի վարիչ
7. Նարինե Սահակյան – կ.գ.դ., դոցենտ, առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի վարիչ
8. Մեժլում Երիցյան – բ.գ. դոկտոր, պրոֆեսոր,կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն
9. Վարուժան Հովհաննիսյան – կ.գ.դ., դոցենտ, էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոն
10. Ալվարդ Կիրակոսյան – կ.գ.թ. , դոցենտ, կենսաբ.,քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն
11. Անահիտ Մինասյան-մ.գ.թ., դոցենտ, աշխարհագր. և նրա դաս. մեթոդ. ամբիոն
12. Միրինե Շողերյան – կ.գ.թ., դոցենտ, էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչի պ/կ
13. Սուսան Քոչինյան – Վ. Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն
14. Արմեն Առուստամյան- բ.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն

15. Տիգրան Թանգամյան – մ.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն
16. Ինեսա Սիրեկանյան – ք.գ.թ., դոցենտ, կենսաբ.,քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն
17. Գևորգ Կարապետյան – ա.գ.դ., պրոֆեսոր, աշխարհագր. և նրա դաս. մեթոդ. ամբիոն
18. Նարեկ Գրիգորյան- ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ
19. Անի Վիրաբյան - ուսանող
20. Մերի Գալստյան- ուսանող
21. Սնակ Քերոբյան – ուսանող
22. Միքայել Մկրտչյան - ուսանող
23. Արփինե Թորոսյան - ուսանող
24. Անդրանիկ Շողերյան– ուսանող
25. Հերիքնազ Ներսիսյան– ուսանող

ՌԵԿՏՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

2022թ. նոյեմբերի 17-ի կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի նիստի

Օրակարգ

1. Տեղեկատվություն հեռակա բակալավրիատի առաջին կուրսերի ընդունելության վերաբերյալ: Զեկ.՝ Ռ.Սադոյան
2. Տեղեկատվություն հեռակա բակալավրիատի լուծարային քննաշրջանի արդյունքների մասին: Զեկ.՝ Ռ.Սադոյան
3. Տեղեկատվություն առկա և հեռակա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին: Զեկ.՝ Ամբիոնների վարիչներ
4. Տեղեկատվություն հեռակա ուսուցման համակարգի 4-րդ և 5-րդ կուրսերի պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ: Զեկ.՝ Վ.Հովսեփյան
5. Հաղորդում առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պրակտիկայի ընթացքի և մագիստրատուրայի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների մասին: Զեկ.՝ Ռ.Սիմոնյան
6. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկանի պ/կ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Սադոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի 13 (տասներեք) անդամ

1. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը հեռակա բակալավրիատի առաջին կուրսերի ընդունելության վերաբերյալ: Ֆակուլտետի դեկանի պաշտոնակատարը տեղեկացրեց խորհրդի անդամներին, որ բակալավրիատում 1-ին կուրս ընդունվել են թվով 8 ուսանող, որոնց հետ կազմակերպվել է տեղեկատվական հանդիպում կապված անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման, Google Classroom հարթակի և մի շարք կազմակերպչական այլ հարցերի հետ:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը հեռակա բակալավրիատի լուծարային քննաշրջանի արդյունքների մասին: Ռ.Սաոդյանը տեղեկացրեց, որ այս կիսամյակ ուսանողների

բավականի մեծ շարժ է նկատվում առկայից հեռակա և հեռակայից առկա ուսանողների տեղափոխման, ինչպես նաև հեռացված ուսանողների վերականգնման առումով:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի, Ս.Շողերյանի և Ռ.Սիմոնյանի (Ս.Պիպոյանը ներկա չէր նիստին) առկա և հեռակա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին: Զեկուցողները տեղեկացրեցին, որ ուսանողների թեմաները հաստատված են, աշխատանքներն ընթանում են ըստ նախատեսված պլանի:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին՝**

Վ.Հովսեփյանի հաղորդումը հեռակա ուսուցման համակարգի 4-րդ և 5-րդ կուրսերի պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ: Հովսեփյանը տեղեկացրեց, որ պաշտպանությունները նախատեսվում է կազմակերպել դեկտեմբեր ամսվա 2-րդ կեսին՝ առկա 4-րդ կուրսերի պաշտպանությանը զուգահեռ:

Բացի այդ, Վ.Հովսեփյանը տեղեկացրեց նաև, որ թիվ 131 դպրոցի հետ ծագել են որոշակի խնդիրներ, որի արդյունքում բուհը լուծել է իրենց հետ գործող համագործակցության պայմանագիրը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

5. **Լսեցին՝**

Ռ.Սիմոնյանի հաղորդումը առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 3-րդ կուրսերի ուսումնաճանաչողական պրակտիկայի ընթացքի և մագիստրատուրայի 2-րդ կուրսերի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների մասին: Սիմոնյանը տեղեկացրեց, որ նշված պրակտիկաների ընթացքում խնդիրներ չեն առաջացել, միայն 1 խմբի հոգեբանը փոխարինվեց այլ մասնագետով հարգելի պատճառներով, սակայն դա չազդեց պրակտիկայի բնականոն ընթացի վրա:

Ռ.Սադոյանը հանձնարարեց, որ 4-րդ կուրսի բոլոր ուսանողներն իրենց թղթապանակներն ավարտին հասցնեն և մինչև նոյեմբերի 22-ն ավարտուն վիճակում ներկայացնեն ամբիոններ:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումն առ այն, որ սույն թվականի մարտի 7-ի նիստում քննարկվել և տպագրության է երաշխավորվել Ս.Կրոյանի, Ս.Խաչատրյանի և

Ա.Խոեցյանի «Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով» ուսումնական ձեռնարկը, սակայն 2022 թվականին լույս է տեսել «Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով» գիրք առաջինը (հեղ.՝ Ս.Կրոյան, Ա.Խոեցյան, Ս.Խաչատրյան) մենագրություն-ուսումնական ձեռնարկ ձևաչափով, ինչպես նաև «Հողերի աշխարհագրություն հողագիտության հիմունքներով» գիրք երկրորդը (հեղ.՝ Ս.Կրոյան, Ա.Խոեցյան, Ս.Խաչատրյան, Գ.Սանոսյան) մենագրություն-ուսումնական ձեռնարկը: Ռ.Սադոյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետի խորհրդի որոշումն առաջին գրքի վրա չի տարածվում՝ ձևաչափի անհամապատասխանության պատճառով, իսկ երկրորդ գիրքը նոր հեղինակային կազմով ընդհանրապես չի ներկայացվել և չի քննարկվել խորհրդում:

Արտահայտվեցին՝

Գ.Կարապետյանը, Ռ.Սիմոնյանը, Ռ.Սադոյանը:

Որոշեցին՝

Դիմել բուհի ղեկավարությանն ակադեմիական անազնվության հիմքով ԱԴՄ ամբիոնի դոցենտներ Ս.Խաչատրյանին և Ս.Կրոյանին նկատողություն հայտարարելու համար:

7. **Լսեցին՝**

Ռ.Սադոյանի հաղորդումը ԿՔԱ ֆակուլտետի 2022 թվականի տարեկան հաշվետվության մասին:

Արտահայտվեցին՝

Ռ.Սիմոնյանը, Ս.Շողերյանը:

Որոշեցին՝

Հաստատել ԿՔԱ ֆակուլտետի 2022 թվականի տարեկան հաշվետվությունը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՍԱԴՈՅԱՆ**

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

2023թ. Հունվարի 31-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի թիվ 7 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում: **Զեկ. Ռ. Սաղոյան**
2. Հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման քննության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն: **Զեկ. Ռ. Սաղոյան**
3. Առկա ուսուցման համակարգում 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն **Զեկ. Ամբիոնների վարիչներ**
4. Տեղեկատվություն հեռակա ուսուցման համակարգի 4-րդ և 5-րդ կուրսերի պրակտիկայի պաշտպանության արդյունքների մասին :**Զեկ. Վ.Հովսեփյան**
5. Տեղեկատվություն առկա ուսուցման համակարգի 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկայի պաշտպանության արդյունքների մասին: **Զեկ.Ռ. Սիմոնյան**
6. Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ֆակուլտետի դեկան Ռ. Սաղոյանի հաղորդումը 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ: Ռ.Սաղոյանը ներկայացրեց քննաշրջանի ամփոփ արդյունքները, ինչպես նաև հանձնեց պատվոգրեր:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սաղոյանի հաղորդումը հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման քննության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ: Նա նշեց, որ քննության նախապատրաստական աշխատանքները ամբեղջովին ավարտված են, ներկայացրեց ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը: Ռ. Սաղոյանը նշեց նաև, որ բոլոր ուսանողները երաշխավորվել են մագիստրոսական թեզերի պաշտպանության, իսկ ֆակուլտետը պատրաստ է քննությունների հավուր պատշաճի կազմակերպմանը:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ամբիոնի վարիչների հաղորդումը առկա ուսուցման համակարգում 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Արտահայտվեցին- Ս.Պիպոյանը նշեց, որ նախորդ օրը ունեցել են ամբիոնի նիստ, որի ընթացքում դասախոսները ներկայացրել են իրենց կատարած աշխատանքը՝ կապված նոր ձևաչափի առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, դասախոսությունների փաթեթների կազմման ուղղությամբ: Նա նշեց նաև,որ բոլոր նախապատրաստական աշխատանքները ավարտված են և ամբիոնը պատրաստ է 2-րդ կիսամյակի մեկնարկին:

Ս.Շողերյանը նշեց, որ ամբիոնում նախապատրաստական աշխատանքները շարունակվում են, իրականացվում է նաև Googleclasroom հարթակում անհրաժեշտ փաթեթների տեղադրման ստուգումներ: Նա նշեց նաև, որ մինչև 2-րդ կիսամյակի ավարտը բոլոր աշխատանքները ավարտված կլինեն:

Ն.Սահակյանը և Ռ. Սադոյանը նշեցին, որ համապատասխան ամբիոններում ևս նիստեր են կազմակերպվել, քննարկվել են առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները,դասախոսությունները և ամբիոնները պատրաստ են 2-րդ կիսամյակին:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Վ. Հովսեփյանի հաղուրդումը հեռակա ուսուցման համակարգի 4-րդ և 5-րդ կուրսերի պրակտիկայի պաշտպանության արդյունքների մասին: Նա նշեց, որ նախօրոք կազմվել է պրակտիկայի փաթեթների պաշտպանության գրաֆիկը, ինչպես նաև պաշտպանությունը: 5-րդ կուրսում չներկայացած ուսանողներ չեն եղել, ներկա են եղել նաև մեթոդիստները, առկա են հաշվետվությունները: Նա նշեց նաև, որ 4-րդ կուրսերում անհրաժեշտություն կա հոգեբանի և մանկավարժի: Առաջարկ է եղել նաև մեկ շաբաթ պրակտիկա կազմակերպել առցանց՝ ուսանողներին պատրաստելու համար:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին-Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար Ռ. Սիմոնյանի տեղեկատվությունը առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի պրակտիկայի պաշտպանության արդյունքների մասին: Նա նշեց, որ պրակտիկայի փաթեթների պաշտպանությունը կազմակերպվել է նախօրոք մշակված գրաֆիկով, ուսանողները ցուցաբերել են բավարար արդյունքներ:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ա. Մինասյանի և Մ. Հարությունյանի << Ռազմական աշխարհագրության հիմունքների ներդրումը դպրոցական աշխարհագրության դասընթացում>> վերնագրով ձեռնարկը հրատարակման երաշխավորելու վերաբերյալ:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ֆակուլտետի ամբիոնների վարիչների հաղորդումը բակալավրիատի 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ:

Արտահայտվեցին- Ռ. Սադոյանը ,Ս. Պիպոյանը, Գ. Կարապետյանը, ովքեր նշեցին , որ ձեռնարկը կարիգ ունի վերամշակման, որոշ շտկումների՝ թե բովանդակային,թե ուսումնամեթոդական առումով: Առաջարկվեց ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը ուղարկել խորհրդի բոլոր անդամներին՝ նյութին ծանոթանալու և անձնական կարծիք արտահայտելու համար:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ռ. Սաղոյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

2023թ. Մարտի 27-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի թիվ 10 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2022-2023 ուստարվա բակալավր 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի մասին : Զեկ՝. Ռ. Սիմոնյան ,Վ. Հովսեփյան
2. 1-ին կիսամյակի լուծարային 1-ին և 2-րդ փուլերի արդյունքների ամփոփում: Զեկ՝. Ռ. Սադոյան
3. Տեղեկատվություն բակալավր 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին: Զեկ՝. Ամբիոնի վարիչներ:
4. Ընթացիկ հարցեր:

Լսեցին-Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար Ռ. Սիմոնյանի տեղեկատվությունը առկա ուսուցման համակարգի բակալավրիատի 3-րդ մանկավարժական պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ: Նա նշեց, որ առկա համակարգում ունենք 3 մանկավարժական պրակտիկա, որից երկուսը ընթացքի մեջ են և մեկնարկել են փետրվարի 15-ից: Ուսանողները բաժանվել են 3 խմբի, պրակտիկայի ընթացքում եղան կազմակերպչական որոշ խնդիրներ, որոնք հարթվել են:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի պրակտիկայի ղեկավար Վ. Հովսեփյանի տեղեկատվությունը հեռակա ուսուցման 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի վերաբերյալ: Նա նշեց, որ 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկան ընթացքի մեջ է

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ֆակուլտետի դեկան Ռ. Սադոյանի հաղորդումը 2022-2023 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի պարտքերի մարման արդյունքների վերաբերյալ: Նա ներկայացրեց քննաշրջանի պարտքերի մարման արդյունքների ամփոփ պատկերը:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ֆակուլտետի ամբիոնների վարիչների հաղորդումը բակալավրիատի 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ:

Ռ. Սադոյանը նշեց, որ կիսամյակի մեկնարկից սկսած ամենամսյա աշխատանքներ են իրականացվում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքին հետևելու ուղղությամբ, ամբիոնի նիստերին ղեկավարները ներկայացնում են ընթացիք վիճակը: Ընդհանուր առմամբ խնդիրներ չկան, ակնկալում ենք ապրիլի առաջին կեսին կազմակերպել աշխատանքերի 1-ին նախապաշտպանությունը, իսկ ապրիլի 2-րդ կեսին 2-րդ նախապաշտպանությունը: Նա նաև նշեց, որ ամբիոնը խնդիր ունի 2 ուսանողի հետ ովքեր ավարտական աշխատանքի

դեռ ոչ մի նյութ չեն ներկայացրել (մեկը զինվոր է, մյուսը 2 երեխա խնամող աղջիկ), սակայն կարծում ենք, որ համապատասխան ժամկետներում այդ ուսանողները կավարտեն իրենց աշխատանքները:

Նա նաև նշեց, որ ավարտական աշխատանքերի և թեզերի կատարման ընթացքը վերահսկվում է, յուրաքանչյուր ամիս ամբիոնի նիստերում քննարկվում է դրանց ընթացքը: Մշակվել է նաև ժամանակացույց նախապաշտպանություններ կազմակերպելու համար: Առաջին նախապաշտպանությունն արդեն կայացել է մարտ ամսվա սկզբին Ս. Պիպոյանը առանձնահատուկ մատնանշեց այն հանգամանքը, որ ամբիոնը հիմնական ուշադրությունը ուղղում է աշխատանքերի փորձարարական բաղադրիչի վրա:

Ս. Շողերյանը նշեց, որ Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնում աշխատանքները գտնվում են ավարտական փուլում և ունեն վարեհաջող ընթացք, կազմակերպվելու է նախապաշտպանություն:

Ն. Սահակյանը նշեց, որ ամբիոնին տրված է 1 մագիստրոսական աշխատանք 1-ին կուրսում:

Որոշեցին- Աշխատանքները գնահատել բավարար և ընդունել ի գիտություն:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ռ. Սադոյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

2023թ. Ապրիլի 27-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի թիվ 11 նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Բակալավրիատի ավարտական 4-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերի կիսամյակային քննությունների արդյունքների և ամփոփիչ ատեստավորման քննությունների գրաֆիկների քննարկում և հաստատում:
   Զեկ՝. Ռ. Սադոյան
2. Ամփոփիչ ատեստովորման քննությունների հանձնաժողովների և նախագահների ներկայացում: Տեղեկատվություն բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության արդյունքների վերաբերյալ:
   Զեկ՝. Ռ. Սադոյան
   Ամբիոնների վարիչներ
3. Ուսուցման հեռակա համակարգի ուսանողների ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:
   Զեկ՝. Ամբիոնների վարիչներ
4. Բակալավրատի առկա ուսուցման 2-րդ և 3-րդ և մագիստրատուրայի 1-ին կուրսերի մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվություն:
   Զեկ՝. Ռ. Սիմոնյան
5. Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ռ. Սադոյանի հաղորդումը բակալավրիատի ավարտական 4-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերի կիսամյակային քննությունների արդյունքների և ամփոփիչ ատեստավորման քննությունների գրաֆիկների հաստատման վերաբերյալ: Նա ներկայացրեց կիսամյակային քննությունների արդյունքները և ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմված գրաֆիկները:

Որոշեցին- բակալավրիատի ավարտական 4-րդ և մագիստրատուրա 2-րդ կուրսերի կիսամյակային քննությունների արդյունքները ընդունել իգիտություն և հաստատել ավարտական 4-րդ և մագիստրատուրայի 2-րդ կուրսերի պետական քննությունների գրաֆիկները :

Լսեցին- Ռ. Սադոյանի հաղորդումը ամփոփիչ ատեստովորման քննությունների հանձնաժողովների և նախագահներիվերաբերյալ :Նա ներկայացրեց ըստ մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմն ու նախագահներին:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն

Լսեցին-ամբիոնների վարիչների տեղեկատվությունը բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսերի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության արդյունքների վերաբերյալ: Ռ. Սադոյանը, Ս. Պիպոյանը և Ն. Սամվելյանը նշեցին, որ ֆակուլտետում և ամբիոններում ընթանում են նախապատրաստական աշխատանքներ: Ամբիոններում անցկացվել են 2 փուլերով նախապաշտպանություններ: Ռ. Սադոյանը նշեց,որ այն դեպքում, եթե

նախապաշտպանությունների արդյունքում ուսանողի կատարած աշխատանքը չի համապատասխանի դրանց ներկայացվող պահանջներին՝ տվյալ ուսանողը չի ատեստավորվի և չի երաշխավորվի ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցության:

Որոշեցին- Ռ. Սադոյանի և ամբիոնների վարիչների հաղորդումն ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ամբիոնների վարիչների հաղորդումը հեռակա համակարգերի ուսանողների ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ս. Պիպոյանը նշեց,որ ԿՔԴՄ ամբիոնում 2 փուլով կազմակերպվել են նախապաշտպանություններ բակալավրիատի առկա ուսուցման և մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների համար, իսկ հեռակա ուսուցման ուսանողների նախապաշտպանությունները կկազմակերպվեն մայիսի 11-ին և 13-ին (տեղեկատվությունը կցվում է ստորև):

Ն. Սամվելյանը նշեց, որ ԱԴՄ ամբիոնում ապրիլի 26ից ապրիլի 29-ը կազմակերպվել է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության 2-րդ փուլը:

Արտահայտվեցին- Ռ. Սադոյանը հորդորեց մեծագույն պատասխանատվությամբ մոտենալ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացին՝ ապահովելով որակյալ աշխատանքների ներկայացում:

Որոշեցին- Ամբիոնների վարիչների տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սիմոնյանի հաղորդումը բակալավրատի առկա ուսուցման 2-րդ և 3-րդ և մագիստրատուրայի 1-ին կուրսերի մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվություն: Նա նշեց,որ ուսանողների մի մասի պաշտպանությունը կազմակերպվել է առերես, մի մասինն էլ՝ առցանց ձևաչափով: Պաշտպանության չեն ներկայացվել 5 ուսանող, անբավարար գնահատակն ստացել է 6 ուսանող:

Որոշեցին- Ռ. Սիմոնյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ռ. Սադոյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
ֆակուլտետի խորհրդի 2023թ. մայիսի 22-ի
թիվ 1 2 նիստ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկանի ընտրություն:

ԼՍԵՑԻՆ- Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր՝ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսորի պ/կ Ռուզաննա Ռոբերտի Սադոյանի ֆակուլտետի դեկանի պաշտոնում վերընտրելու վերաբերյալ:

Ռ. Սադոյանը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի աշխատանքային նախագիծն ու զարգացման ռազմավարական ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պրոֆ. Մ. Երիցյանը, Գ. Կարապետյանը, Ս. Պիպոյանը, ֆակուլտետի ՈՒԽ. նախագահ Մարիամ Սարգսյանը, ովքեր նշեցին, որ համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի և միջազգայնացման գործընթացի շրջանակներում վերջին երկու տարիների ընթացքում ֆակուլտետի դեկան Ռ. Սադոյանի ղեկավարությամբ իրականացվել են լուրջ աշխատանքներ, կատարվել են գիտաուսումնական գործընթացի որակի բարձրացմանն ուղղված կառուցողական քայլեր: Նշվեց նաև, որ ֆակուլտետի աշխատակիցները ծանոթ են Ռ. Սադոյանի աշխատանքային ոճին և կարողություններին, նա օժտված է մարդկային բոլոր արժանիքներով ու հատկանիշներով:

Արտահայտվողները համոզմունք հայտնեցին առ այն, որ Ռ. Սադոյանը մեծապես կնպաստի ֆակուլտետի գիտաուսումնական գործընթացի հետագա բարելավմանը, ողջունեցին դեկանի պաշտոնում առաջադրված Ռ. Սադոյանի թեկնածությունը և կոչ արեցին խորհրդի անդամներին միաձայն կողմ քվեարկել ներկայացված թեկնածուին:

Նիստը նախագահող ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը առաջարկեց թեկնածություններ ներկայացնել հաշվիչ հանձնաժողով ձևավորելու համար: Առաջարկվեց հաշվիչ հանձնաժողով ձևավորել 3 անդամից հետևյալ կազմով՝ Մ.

Երիցյան (նախագահ), Ս. Պիպոյան, Մ. Սարգսյան: Խորհրդի անդամներին բաժանվեցին քվեաթերթիկներ, փակ գաղտնի քվեարկության համար: Քվեարկությանը մասնակցեց խորհրդի 19 անդամներից նիստին ներկա 18-ը: Գաղտնի քվեարկության արդյունքում արձանագրվեց 18 կողմ, 0 դեմ, 0 անվավեր քվեաթերթ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները՝ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսորի պ/կ Ռուզաննա Ռոբերտի Սաղոյանին համարել վերընտրված կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ՆԵՐՍԵՍ ՍԱՄՎԵԼՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

2023թ. Հուլիսի 7 -ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի թիվ 13 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների ներկայացում: **Զեկ. Ռ. Սադոյան**

2.2022-2023թթ ուստարում ամբիոններում կատարված աշխատանքների հաշվետվությունների քննարկում և գնահատում: **Զեկ. Ամբիոնի վարիչներ**

3. Մանկավարժական պրակտիկայի թղթապանակների պաշտպանության արդյունքների ամփոփում: **Զեկ. Ռ. Սիմոնյան,Վ. Հովսեփյան**

4. Ամբիոններում նախնական դասաբաշխումների ներկայացում:**Զեկ Ամբիոնի վարիչներ**

5.Ընթացիկ հարցեր:

Լսեցին- Ֆակուլտետի դեկան Ռ. Սադոյանի հաղորդումը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների վերաբերյալ: Ռ.Սադոյանը ներկայացրեց նախագահների հաշվետվությունները,նշեց նաև ,որ ուսանողների կողմից ոչ մի բողոքարկում և ոչ մի անբավարար գնահատականներ չի եղել:

Հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները կցվում են :

Արտահայտվեցին- Ս. Պիպոյանը ,Ս. Շողերյանը,Ն. Սահակյանը,ովքեր առաջարկեցին ներկայացված հաշվետվությունները ի գիտություն:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ամբիոնի վարիչների հաշվետվությունները 2022-2023 ուստարում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ս. Պիպոյանը նշեց,որ հաշվետու տարում ամբիոնը կատարել է հաստատված ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքները,վերանայվել են և բարելավել առարկայական բոլոր նկարագրերը թեմատիկ տրոհումները և հարցաշարերը:Իրականացվել է 25 դասալսում ,հրավիրվել 18 ամբիոնի նիստ:Ամբիոնը կազմակերպել է նաև ուսանողների գիտելիքների ստուգաՅՑ և ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ 3 ՓՈՒԼՈՎ ՆԱԽԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ:Հաշվետու տարում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը հրատարակել է 28-ից ավել գիտական հոդված, ուսումնական ձեռնարկներ ,կազմակերպվել են աշակերտական շրջայցեր ֆակուլտետ:

Ռ.Սադոյանը նշեց որ հաշվետու տարում ամբիոնի աշխատանքները կազմակերպվել են ըստ նախատեսված պլանի ,լրամշակվել են ուսմնական պլանները և առարկայական նկարագրերն ու ՄԿԾ-ները:Նա նաև նշեց ,որ ամբիոնի դասախոսների

կողմից իրականացվել է քարոզարշավ:Նախապաշտպանությունները իրականացվել են 3 փուլով:

Ս. Շողերյանը և Ն. Սահակյանը նույնպես ներկայացրեցին ամբիոններում կատարված աշխատանքները:Խոսվեց նաև ուսուցիչների վերապատրաստման մասին:

Որոշեցին- Ամբիոնի վարիչների հաշվետվությունները համարել բավարար և ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ռ. Սիմոնյանի և Վ. Հովսեփյանի հաղորդումը մանկավարժական պրակտիկայի թղթապանակների պաշտպանության արդյունքների վերաբերյալ:Ռ. Սիմոնյանը նշեցին ,որ անբավարար գնահատականներ չկան,բայց ունեցել ենք 3 բացակա ուսանող ովքեր պետք է պաշտպանեն թղթապանակները սեպտեմբեր ամսին :

Հեռակա ուսուցման համակարգում եղել են անբավարար գնահատականներ ՝ 2-ը աշխարհագրության 1-ը կենսաբանության բաժնի ուսանողների մոտ:Բայց այլ բաղադրիչներով դրական գնահատականը ապահովվել են:ՈՒնենք մեկ չներկայացված ուսանող ով կմասնակցի լուծարքային փուլին:Վ. Հովսեփյանը առաջարկեց որոշակիորեն փոփոխել պրակտիկայի ընթացքը և հարցը քննարկել սեպտեմբեր ամսին:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն

Լսեցին- Ամբիոնի վարիչների հաղորդումը ամբիոններում նախնական դասաբաշխումների վերաբերյալ:

Արտահայտվեցին- Ռ. Սադոյանը ,Ս. Պիպոյանը,Ս.Շողերյանը,Ն. Սահակյանը,ովքեր ներկայացնելով համապատասխան ամբիոններում նախնական դասաբաշխման պատկերը նշեցին,որ էլեկտրոնային տարբերակով դասաբաշխումը կփոխանցվի դասախոսների էլեկտրոնային հասցեներին:Ս. Պիպոյանը նշեց որ ամբիոնը ունի ֆիզ արձակուրդից վերադարցող մեկ դասախոս:

Որոշեցին- Ընդունել ի գիտություն:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության

Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ **Ռ. Սադոյան**

Նիստի քարտուղար՝ **Ն. Սամվելյան**

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 3560-Ա 31/10 2023 թ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 2813-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 28-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետով և հիմք ընդունելով Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկանի պ/կ Ն.Ա. Սաֆարյանի 2023 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 23-10 զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1)Ուժը կորցրած ճանաչել Համալսարանի ռեկտորի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Համալսարանի ռեկտորի 2023 թվականի փետրվարի 23-ի թիվ 562-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու և Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի նոր կազմը հաստատելու մասին» թիվ 2813-Ա հրամանը:

2)Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհուրդը հաստատել հետևյալ կազմով.

1. Նաիրա Սաֆարյան –Ֆակուլտետի դեկանի պ/կ., խորհրդի նախագահ
2. Մարիամ Իսպիրյան - ուսումնագիտական գծով պրոռեկտոր, Մանկավարժական համալսարանի Գիտական քարտուղար
3. Նունե Օրդյան – տ.գ.թ, դոցենտ, ուսումնական գծով դեկանի տեղակալ
4. Ներսես Սամվելյան –գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ
5. Կամո Վարդանյան –գիտահետազոտական կենտրոնի ղեկավար
6. Սամվել Պիպոյան – կ.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոնի վարիչ
7. Նարինե Սահակյան –կ.գ.դ., դոցենտ, առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի վարիչ
8. Մեժլում Երիցյան- ք.գ.դ., պրոֆեսոր, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն
9. Նիկոլայ Կնյազյան – տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
10. Ինեսսա Սիրեկանյան –ք.գ.թ., դոցենտ, ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար
11. Դայան Սիմա - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
12. Սիրինե Շողերյան- կ.գ.թ., դոցենտ, էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչի պ.կ.
13. Ռուզաննա Սիմոնյան կ.գ.թ.,դոցենտ, կենսաբ., քիմիայի և դրանց դաս. մեթոդ. ամբիոն
14. Սուսան Քոչինյան- Վ.Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն
15. Տիգրան Հարությունյան - ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ
16. Մարիամ Սարգսյան - ուսանող
17. Միքայել Մկրտչյան– ուսանող
18. Հայկանուշ Հարությունյան– ուսանող
19. Աստղիկ Հարությունյան –ուսանող

ՌԵԿՏՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2023թ. հոկտեմբերի 20-ին տեղի ունեցավ կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի թիվ 1 նիստը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.2023-2024 ուս.տարվա առկա ուսուցման լուծարքային առաջին և երկրորդ փուլերի արդյունքների ամփոփում /զեկ., դեկանի տեղ. ուսումնական աշխատանքների գծով/**Ն. Օրդյան**

2.2023-2024 ուս.տարվա հեռակա ուսուցման բաժնի 2-րդ կիսամյակի քննությունների արդյունքների ամփոփում /զեկ.՝ դեկանի տեղ. ուսումնական աշխատանքների գծով/ **Ն. Օրդյան**

3.Կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատում /զեկ.՝ ամբիոնների վարիչներ/**Ս.Պիպոյան**

4.Առկա մագիստրատուրայի մանկավարժահետազոտական պրակտիկայի կազմակերպման, առկա ուսուցման բակալավրիատ 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին /զեկ.՝ ֆակուլտետի առկա ուսուցման պրակտիկայի ղեկավար/ **Ի.Միրեկանյան**

5.Ընթացիկ հարցեր

Լսեցին- ուսումնական աշխատանքների գծով դեկանի տեղակալ Ն. Օրդյանի հաղորդումը 2023-2024 ուս.տարվա առկա ուսուցման լուծարքային առաջին և երկրորդ փուլերի և հեռակա ուսուցման բաժնի 2-րդ կիսամյակի քննությունների արդյունքների վերաբերյալ :Ն. Օրդյանը նշեց ,որ 2022-2023 ուստարվա լուծարքների ամփոփման արդյունքում ֆակուլտետի առկա համակարգից հեռացվել են հետևյալ ուսանողները .

1. “Կենսաբանություն” մասնագիտության առկա մագիստրատուրայի 1-ին կուրս Հովհաննիսյան Մերի,Զաքարյան Մանե:

2. “Քիմիա” մասնագիտության առկա մագիստրատուրայի 1-ին կուրս Պողոսյան Շալիկո:

3. Իրենց դիմումի համաձայն ուսումն ընդհատել են ՝

“Քիմիա” մասնագիտության առկա մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Ռոզա Ամիրջանյանը, և “Աշխարհագրություն” մասնագիտության առկա մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Մուշեղ Սմբատյանը:

Նա նաև նշեց, որ հեռակա ուսուցման համակարգից ներկա պահին հեռացումներ չկան:

Որոշեցին- Ն. Օրդյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Լսեցին- ամբիոնների վարիչների հաղորդումը կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատման հարցի վերաբերյալ:

Արտահայտվեցին- Ն. Սաֆարյանը,Ս.Պիպոյանը,Ս.Շողերյանը,Ն.Սահակյանը, ովքեր ներկայացրեցին ամբիոններում քննարկված և համապատասխան նիստերով հաստատված կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաներն ու ղեկավարներին (կցվում են ստորև):

Որոշեցին- ընդունել ի գիտություն:

Լսեցին- Ֆակուլտետի առկա ուսուցման պրակտիկայի ղեկավար Ի.Սիրեկանյանի հաղորդումը մագիստրատուրայի մանկավարժահետազոտական պրակտիկայի կազմակերպման, առկա ուսուցման բակալավրիատ 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ընթացքի վերաբերյալ: Ի. Սիրեկանյանը նշեց,որ մեկնարկել է մագիստրատուրայի 2-րդ և բակալավր 3-րդ և 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկան: Նա մատնանշեց, որ խնդիր ունենք մագիստրատուրայի այն ուսանողների հետ, ովքեր աշխատում են և մանկավարժահետազոտական պրակտիկան պետք է անցնեն իրենց աշխատավայրերում: Այստեղ պրակտիկան վերահսկելու դժվարություն է առաջանում, քանի որ ուսանողներն աշխատում են տարբեր մարզերում : Փորձել ենք ուսանողների հետ կապն իրականացնել ինտեռնետային կապի՝ mit-ի միջոցով: Կարծում ենք ,որ որոշակիորեն պետք է վերանայել մանկավարժահետազոտական պրակտիկայի բովանդակությունը:

Ի. Սիրեկանյանը նաև նշեց, որ մյուս բոլոր կուրսերի պրակտիկան ընթանում է բնականոն, իր կողմից շրջայց է կատարվել դպրոցներում, զրույց է ունեցել տնօրենների,փոդտնօրենների և ուսուցիչների հետ:Բոլորը դրական են արտահայտվել:Նշվեց նաև, որ նա պատրաստվում է կազմակերպել ուսանողների հետ հանդիպում արձակուրդների ժամանակահատվածում ՝ svod վերլուծության կազմման ձևը բացատրելու նպատակով:

Արտահայտվեցին- Ս. Պիպոյանը, Մ. Երիցյանը , ովքեր խնդրեցին Սիրեկանյանին պարզաբանել պրակտիկայի հետազոտական բաղադրիչի էությունը:Ի. Սիրեկանյանը տվեց որոշակի մեկնաբանություններ: Ս.Պիպոյանը և Մ. Երիցյանը առաջարկեցին մագիստրոսներին կցել իրենց ղեկավարներին և միասին իրականացնել թեզի շրջանակներում մանակվարժահետազոտական աշխատանքները: Երիցյանը նաև առաջարկեց քննարկել մագիստրոսների կատարած աշխատանքները ամբիոնում և գնահատել ուսանողների ներկայացրած հաշվետվությունները:

Որոշեցին- Ի. Սիրեկանյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր

Լսեցին-Կենսաբանության,քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս. Պիպոյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Արմինե Բաղալյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և ղեկավար նշանակելու վերաբերյալ:Նա նշեց, որ ամբրոնի ս.թ. հուլիսի 4-ի թիվ 18 նիստում Արմինե Բաղալյանի թեկնածուական ատենախոսության թեմա է առաջարկվել <<Դպրոցամերձ ուսումնափորձնական հողամասերի դերը աշակերտների էկոլոգիական

կարողությունների ձևավորման գործում>>, իսկ ղեկավար՝ ԿՔԴՄ ամբիոնի վարիչ կենս. գիտ. դոկտոր,պրոֆ. Ս. Պիպոյանը (նիստի քաղվածքը կցվում է):

Արտահայտվեցին- Ն. Սաֆարյանը,Կ. Վարդանյանը, Մ. Երիցյանը ,Ն. Սամվելյանը , ովքեր հավանություն տվեցին առաջարկված թեմային և ղեկավարին:

Որոշեցին- հիմք ընդունելով ԿՔԴՄ ամբիոնի 2023թ.հուլիսի 4-ի թիվ 18 նիստի քաղվածքը և արտահայտված կարծիքները՝դիմել ՀՊՄՀ գիտական խորհրդին հաստատելու ԿՔԴՄ ամբիոնի հայցորդ Արմինե Բաղալյանի <<Դպրոցամերձ ուսումնափորձնական հողամասերի դերը աշակերտների էկոլոգիական կարողությունների ձևավորման գործում>>թեկնածուական ատենախոսության թեման,իսկ գիտական ղեկավար կենս. գիտ. դոկտոր,պրոֆեսոր Սամվել Պիպոյանին:

Լսեցին-ֆակուլտետին գիտական գծով դեկանի տեղակալ Ն. Սամվելյանի հաղորդումը ԱԴՄ ամբիոնի դոցենտ Ա. Մինասյանի և մագիստրոս Մ. Հարությունյանի <<Ռազմական աշխարհագրության գիտելիքների առժեվորումը դպրոցական աշխարհագրության դասընթացում>> ուսումնաօժանդակ ձեռնարկը հրատարակման երաշխավորելու հարցի վերաբերյալ:Նա ներկայացրեց ԱԴՄ ամբիոնի ս.թ. հուլիսի 6-ի թիվ 17 նիստի արձանագրությունից քաղվածք, ձեռնարկի վերաբերյալ ներկայացված կարծիքներ ,որոնց հեղինակները երաշխավորել են ձեռնարկի տպագրությունը :

Արտահայտվեցին- Ս. Դայանը նշեց,որ աշխատանքի լրամշակված տարբերակին ծանոթ չէ և առաջարկեց այն ներկայացնել ամբիոն,որպեսզի բոլոր դասխոսները ծանոթանան և տան իրենց կարծիքը:

Որոշեցին- Ա. Մինասյանի և մագիստրոս Մ. Հարությունյանի <<Ռազմական աշխարհագրության գիտելիքների առժևորումը դպրոցական աշխարհագրության դասընթացում>> ուսումնաօժանդակ ձեռնարկի լրամշակված տարբերակը ներկայացնել ամբիոն ծանոթանալու համար և առաջիկա ամբիոնի նիստում դնել քննարկման:

Լսեցին-Աշխարհագրության և նրա դասավանդման ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ն. Սաֆարյանի հաղորդումը աշխարհագրություն մասնագիտության հեռակա ուսուցման 5-րդ կուրսի վերականգնված ուսանող Արամ Նորիկի Բաբայանի ավարտական աշխատանքի թեմայի և ղեկավարի ընտրության հարցի վերաբերյալ :Նա նշեց ,որ Արամ Բաբայանը 2015թվականին մասնակցել է ավարտական աշխատանքի պաշտպանությանը սակայն դրական գնահատական չի ստացել:Իր դիմումի համաձայն վերականգնվել է և պետք է առաջարկել ավարտական աշխատանքի թեմա, կատարել ղեկավարի ընտրություն :Ն. Սաֆարյանը ներկայացրեց ԱԴՄ ամբիոնի ս.թ. հոկտեմբերի 18-ի թիվ 2 նիստի արձանագրությունից քաղվածք :Նիստում Արամ Բաբայանի ավարտական աշխատանքի թեմա է առաջարկվել <<Աշխարհագրական փորձերը, որպես սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց հիմնական դպրոցում>> , իսկ ղեկավար՝ ամբիոնի դոցենտ Ն. Սամվելյանը:

Արտահայտվեցին- Ն. Սամվելյանը, Ս. Պիպոյանը, Ս. Դայանը ,ովքեր հավանություն տվեցին ԱԴՄ ամբիոնի առաջարկին:

Որոշեցին- Հիմք ընդունելով ԱԴՄ ամբիոնի հոկտեմբերի 18-ի թիվ 2 նիստի որոշումն և արտահայտվողների կարծիքը՝ Արամ Բաբայանի ավարտական աշխատանքի թեմա հաստատել <<Աշխարհագրական փորձերը, որպես սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց հիմնական դպրոցում>> ,իսկ ղեկավար՝ ամբիոնի դոցենտ Ն. Սամվելյանին:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության
Ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Ն. Սաֆարյան

Նիստի քարտուղար՝ Ն. Սամվելյան

21.10 .2023թ.